ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ. Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան դիմելու հիմքերն ու հնարավորությունները, *Երևան, «Տիր» հրատ., 2014, 216 էջ:*

2015 թվականը հայության համար պատմական բնագիծ է նշանավորում: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը պահանջում է առանձնահատուկ հայեցակարգային նոր մոտեցում: Հայությունը դադարել է զոհ լինելու բարդույթը կրելուց և իր ուսերից դեն է նետել նահատակի բաճկոնը: Մեր ժողովուրդը այժմ աշխարհի առջև հանդես է գալիս իր պետականությունը վերականգնած և արդի միջազգային հանրության լիիրավ անդամ, իսկ Հայոց ցեղասպանության հարցը ճանաչման դաշտից տեղափոխվել է արդարացի պահանջատիրության դաշտ: Հենց սույն եզրույթով է իր մենագրությունը շարադրել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայոց ցեղասպանության բաժնի վարիչ, պ. գ. թ. Արմեն Մարուքյանը: Աշխատանքը հրատարակվել է ՀՀ նախագահի գործընկեր կազմակերպության՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի դրամաշնորհային մրցույթի շրջանակներում: Գրքի խմբագիրներն են Պատմության ինստիտուտի գիտաշխատող, պ. գ. թ. Հ. Սուքիասյանը և «Օրենքի ուժով» իրավապաշտպան կազմակերպության հիմնադիր անդամ Լ. Գևորգյանը:



Մենագրությունը բաղկացած է առաջաբանից, երկու գլխից, եզրակացություններ և առաջարկներ բաժնից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, հավելվածից: Առաջաբանում հեղինակը նշում է, որ հանցագործ պետությունը՝ Թուրքիան, ոչ միայն չի համակերպվում պատմական փաստերի հետ, այլև պետական մակարդակով վարում է Հայոց ցեղասպանությունը ժխտելու քաղաքականություն: Քաղաքական այս ուղեգծով էլ Թուրքիան փաստացիորեն Հայոց ցեղասպանության խնդիրը դուրս է բերել պատմական հարթությունից և վերածել քաղաքական հարցի: Մի շարք միջազգային կազմակերպություններ և ավելի քան երկու տասնյակ պետություններ արդեն իսկ տվել են Հայոց ցեղասպանության քաղաքական գնահատականը՝ այն որակելով որպես ծանր միջազգային հանցագործություն: Սակայն Թուրքիան բնավ չի ցանկանում համակերպվել Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման հետ՝ տարաբնույթ միջոցներ ձեռնարկելով դրանց արձանագրումն ու վավերա-

ցումը այլ երկրներում թույլ չտալու համար: Ուստի, ըստ հեղինակի, հայությանը՝ որպես այդ հանցագործությունից տուժած ժողովրդի, այլ ելք չի մնում, քան Հայոց ցեղասպանության հարցը միջազգային իրավական դաշտ տեղափոխելն ու այն միջազգային դատական ատյանում լուծելը:

Աշխատության առաջին գլխում («Մարդկության դեմ կատարված հանցագործությունների դատապարտման դատական պրակտիկան») քննության է առնվում մարդկության դեմ կատարված հանցագործությունները դատապարտող միջազգային դատական ատյանի ստեղծման նախադրյալները: Հեղինակը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջազգային իրավունքում մեծ նշանակություն է տրվում նաև իրավակիրառական պրակտիկային, մանրակրկիտ ներկայացնում է այլ ժողովուրդների նկատմամբ կատարված ծանրագույն ոճրագործությունների գործերով ազգային, միջազգային ու միջազգայնացված դատական ատյաններում կայացած դատավարությունների ընթացքը, դրանք դիտարկելով իբրև նախադեպեր՝ միջազգային դատական ատյանում Հայոց ցեղասպանության գործով հայցի ներկայացման ու բավարարման համար:

Այդ կարգի առաջին նախադեպի փորձն արվեց առաջին համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես հետո՝ 1918 թ. դեկտեմբերին, երբ հաղթանակած տերությունների կողմից ստեղծված պատերազմի օրենքների և սովորույթների խախտումները հետազոտող հանձնաժողովն առաջարկեց հիմնել միջազգային տրիբունալ՝ Գերմանիայի նախկին կայզերին և բարձրաստիճան այլ պաշտոնյաներին ոչ միայն պատերազմական սովորույթներն ու օրենքները, այլև մարդասիրական սկզբունքները խախտելու դիմաց պատասխանատվության ենթարկելու համար: Ընդ որում՝ վերոնշյալ պատասխանատվությունը պետք է տարածվեր նաև Ավստրիայի, Օսմանյան կայսրության և Բուլղարիայի վրա: Ենթադրվում էր, որ ստեղծվելիք միջազգային տրիբունալի մասին դրույթները պետք է ամրագրվեին պարտված պետությունների հետ կնքվելիք խաղաղության պայմանագրերում: Ի վերջո, հիշյալ դրույթներն ամրագրվեցին Վերսալի հաշտության պայմանագրի 227-րդ և 228-րդ հոդվածներում: Մասնավորապես, վերջին հոդվածում Գերմանիան ճանաչում և ընդունում էր պատերազմական հանցագործներին դատելու տերությունների իրավունքը և պարտավորվում էր նրանց հանձնել մեղադրյալներին: Սակայն միջազգային տրիբունալի ստեղծումը օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով ձախողվեց:

1920 թ. Ազգերի լիգային ներկայացվեց Քրեական գործերով միջազգային արդարադատության բարձրագույն դատարանի ստեղծման մասին որոշման նախագիծը, ինչը նույնպես չընդունվեց այն պատճառաբանությամբ, որ դեռևս գոյություն չունի ժողովուրդների կողմից ընդունված միջազգային քրեական իրավունք: Ա. Մարուքյանը փաստարկում է, որ միջազգային քրեական իրավունքի

բացակայությունը խոչընդոտ եղավ միջազգային քրեական դատարանի ստեղծման ճանապարհին և հենց այս հանգամանքն էլ հնարավորություն ընձեռեց երիտթուրքական պարագլուխներին խուսափել իրական պատասխանատվությունից և բավարարվել 1919 թ. թուրքական ազգային ռազմական տրիբունալում երիտթուրքերի դատավարության բեմականացմամբ:

«Ցեղասպանության՝ իբրև մարդկության դեմ կատարված հանցագործության դատապարտումը ազգային դատարաններում» ենթագլխում հեղինակը մանրակրկիտ վերլուծում ու պարզաբանում է հատկապես երիտթուրքերի դատավարության գործընթացի էությունը թուրքական ռազմական տրիբունալներում՝ կատարելով նոր հարցադրումներ ու բացառիկ կարևոր եզրահանգումներ: Պատմաբանը նշում է, որ ժամանակի պաշտոնական և ոչ պաշտոնական թուրքական մամուլում օսմաներենով հրատարակվել են վերոնշյալ դատավարությունների արձանագրությունները, որոնք Հայոց ցեղասպանության փաստը հաստատող չափազանց կարևոր և անժխտելի վավերագրեր են: Միաժամանակ նա փաստարկում է, որ օրվա թուրքական իշխանությունները ինքնակամ գնացին երիտթուրքական հանցագործներին սեփական ռազմական տրիբունալում դատապարտելու քայլին, քանի որ դրանով իսկ փորձում էին կանխարգելել վերոնշյալ անձանց դատելու հնարավորությունը ապագայում ստեղծվելիք միջազգային տրիբունալում: Ա. Մարուքյանը միաժամանակ ընդգծում է մյուս կարևոր եզրահանգումը. երիտթուրքերի դատավարությունը նախաձեռնողները նպատակադրվել էին ռազմական հանցագործությունների մեղքը բարդել բացառապես «Միություն և առաջադիմություն» կուսակցության վրա՝ փորձելով պատասխանատվությունից ու վարկաբեկումից զերծ պահել թուրք ազգին և թուրքական պետականությանը: Ակնհայտ էր, որ Հայոց ցեղասպանության հիմնական կազմակերպիչներին՝ Էնվերին, Թալեաթին, Ջեմալին, Նազիմին և այլոց նախապես թույլ էին տվել հեռանալ երկրից, քանի որ այդ մեղադրյալների հանցաքննության ընթացքում կբացահայտվեին բազում փաստեր, որոնք էլ միանշանակ կհանգեցնեին թուրքական պետության պատասխանատվությանը:

Աշխատության հեղինակը իրավացիորեն նշում է, որ թուրքական պետության մեջ արդարադատության սաբոտաժն իրականացվում էր պետական բարձր մակարդակով: Ռազմական, ներքին գործերի և արդարադատության նախարարություններում թաքցվում ու ոչնչացվում էին կարևոր փաստաթղթեր, գաղտնի և հույժ գաղտնի համարվող նյութեր, տեղական իշխանություններին արգելվում էր իրականացնել դատական կարգադրություններ, մեղադրյալներին օգնում էին թաքնվել արդարադատությունից ու հեռանալ երկրից: Փաստորեն, սույն դատավարությունը վերածվել էր լավ բեմականացված ներկայացման, այն հե-

տապնդում էր Հայոց մեծ ողբերգությանը քաջատեղյակ միջազգային հանրությանը հանգստացնելու քաղաքական նպատակ՝ ցույց տալով հաղթանակած Անտանտի տերություններին, որ «նոր Թուրքիան», իբր, պատժում է պատերազմական հանցագործներին:

Ա. Մարուքյանի խորին համոզմամբ, իրականությանը բնավ չի համապատասխանում այն թեզը, թե երիտթուրքերի դատավարությունը թուրքական իշխանությունները կազմակերպեցին Անտանտի կամ հենց միայն Անգլիայի ճնշման ներքո, որի զորքերը հաղթողի կարգավիճակով գտնվում էին Կ. Պոլսում: Այո, պատմական իրողությունները հաստատում են, որ երիտթուրքերի նկատմամբ այդ դատավարությունը նախաձեռնվեց բացառապես ելնելով այն բանից, որ թուրքական պետությունը խուսափի միջազգային տրիբունալից, որը, կրկնենք, նախատեսվում էր ստեղծել Օսմանյան կայսրությունում պատերազմի ընթացքում կատարված զանգվածային ոճրագործությունների առնչությամբ:

Աշխատության մեջ քննության առնելով Սողոմոն Թեհլերյանի և Էյխմանի դատական գործերի նշանակությունը՝ հեղինակը մատնանշում է այդ երկու գործընթացների միջև եղած ընդհանուր և մասնավոր առանձնահատկությունները. Թալեաթի դեմ մահվան դատավճիռը ի կատար է ածվել ոչ թե նրան դատապարտած Թուրքիայի կամ միջազգային արդարադատության, այլ հայ վրիժառու Սողոմոն Թեհլերյանի կողմից: Իսկ նացիստական ոճրագործ Էյխմանին առևանգած իսրայելական հատուկ ծառայությունները ստիպված էին խախտել Արգենտինայի ինքնիշխանությունը, որպեսզի Իսրայելի դատարանը միջազգային արդարադատություն իրականացնի Նյուրնբերգի տրիբունալից խուսափած հանցագործի նկատմամբ:

Մի շարք բաժիններում («Մարդկության դեմ կատարված հանցագործությունների դատապարտումը ad hoc միջազգային տրիբունալներում», «Ցեղասպանության և մարդկության դեմ կատարված հանցագործությունների դատապարտումը միջազգային մշտական դատական ատյաններում», «Մարդկության դեմ կատարված հանցագործությունների դատապարտումը «հիբրիդային»՝ միջազգային-ազգային դատական ատյաններում») Ա. Մարուքյանը գնահատում, իմաստավորում և ընդհանրացնում է այն փորձն ու փորձառությունը, որ մարդկությանը կուտակել է ծանրագույն ոճրագործություններ կատարած անհատների և պետությունների դեմ իրականացված միջազգային տրիբունալներում: Այդ առումով արդիական, ուսանելի և օրակարգային կմնան նացիստական հանցագործների ու ճապոնացի միլիտարիստների դատապարտման դասական օրինակները նյուրնբերգյան և Տոկիոյի միջազգային ռազմական տրիբունալներում՝ ի տես համայն մարդկության:

Աշխատության երկրորդ գլուխն ամբողջությամբ նվիրված է Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան ներկայացվելիք հայցադիմումի կազմման ու ներկայացման հիմնախնդիրներին ու հնարավորություններին: Ըստ այդմ, հեղինակը մանրամասնում է Հայոց ցեղասպանության գործով ՄԱԿ-ի Միջազգային դատարան ներկայացվելիք հայցադիմումի բաղադրիչները, որոնք դատական կազմակերպված գործընթաց սկսելու հնարավորություններ կընձեռեն հայկական կողմին: Վերոնշյալ բաղադրիչները լիուլի բավականացնում են սկսելու միջազգային դատական գործընթացը:

Ա. Մարուքյանի համոզմամբ՝ անհրաժեշտ պատմական և իրավական բաղադրիչների միջոցով փաստական հանգամանքների ու ապացույցների ներկայացումից և իրավունքի տեսակետից դրանց գնահատական տալուց հետո հայցադիմումը պետք է եզրափակվի Հայոց ցեղասպանությունից հետո հայ ժողովրդի կրած կորուստներն ու դրանց հետևանքներն արտահայտող դատարանին ներկայացվող պահանջներով: Իսկ կորուստներն ու հետևանքները պայմանականորեն բաժանվում են հետևյալ խմբերի՝ ա) հայրենազրկում, բ) մարդկային կորուստներ, գ) մշակութային ժառանգության կորուստ, դ) նյութական կորուստներ: Պատմաբանը աշխատության էջերում սույն չորս խմբերի վերաբերյալ հանդես է գալիս կոնկրետ փաստերով ու փաստարկումներով: Այնուհետև քննության է առնվում ՄԱԿ-ի Միջազգային դատարանում Հայոց ցեղասպանության գործով դատական ընթացակարգերը և որոշման հնարավոր տարբերակների հավանականության ընթացքը: Ընդ որում, նշվում ու հիմնավորվում է, որ Հայոց ցեղասպանության գործով ՄԱԿ-ի Միջազգային դատարան դիմելու գործընթացը պետք է լրջորեն նախապատրաստված ու ապահովագրված լինի դրան նախորդող ու դրա հետ զուգահեռ տարվող քաղաքական գործընթացով:

Աշխատության հավելվածում դիտարկվում է Թուրքիայի հրահրմամբ և աջակցությամբ 2014 թ. քեսաբահայության նկատմամբ կատարված հանցագործությունների քննության հնարավորությունները Միջազգային քրեական դատարանում:

Ամփոփենք. Ա. Մարուքյանի սույն աշխատությունը նոր, թարմ խոսք է Հայոց ցեղասպանության ճանաչման և հատուցման գործը իրավական հարթության վրա կառուցելու և այդ կերպ հետագա պայքարը շարունակելու առումով: Պատմաբանը բարեխղճորեն ուսումնասիրել է միջազգային իրավական ու դատական պրակտիկայում առկա վիթխարի փորձը և նշել այն մեթոդներն ու ուղիները, որով պետք է ընթանա հանուն հայոց պահանջատիրության մղվող արդարացի ու անբեկ պայքարը:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ